

ԴՈԿՏ. ԼՈՒՍԻՆԷ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՇԱՐԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ «ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՐՈՒԹԻՒՆՈՒՄ ՅԱՅԵՐԻ ԲՈՆԻ ՄԱՅՄԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՅԵՏԵԲԱՆՔՆԵՐԸ»

ԼՈՍ
ՎԱՐՈՍ

ԽԱՉԻԿ ԵԱՆՈՅԵԱՆ



Լուսինէ Սահակեան

Կիրակի, Ապրիլ 22, 2007-ին, երեկոյեան ժամը 5:30-ին, Կլենտէյլի հանրային գրադարանի մէջ տեղի ունեցաւ շահեկան դասախօսութիւն մը, «Օսմանեան Կայսրութիւնում Հայերի Բռնի Մահմետականացման Հետեւանքները» նիւթին շուրջ:

Դասախօսուհին էր Երեւանի Պետական Համալսարանի Թրքագիտութեան բաժնի փոխ տնօրէնուհի Դոկտ. Լուսինէ Սահակեան, որ իր բովանդակալից ելոյթով խորապէս գոհ ձգեց ներկաները:

Յիշենք, թէ Մարտ-Ապրիլ ամիսներուն քաղաքս կը գտնուէին, այս համակրելի եւ հմուտ բանասէրը Դոկտ. Լուսինէ Սուրէնի Սահակեանը եւ իր ամուսինը, նոյնքան համակրելի եւ հմուտ քաղաքագիտութեան մասնագէտ՝ Դոկտ. Արմէն Այվազեանը: Այս երիտասարդ գիտնականները իրենց հեռուստատեսիլի ելոյթներով, հրապարակային դասախօսութիւններով, մեծ ոգեւորութիւն եւ հետաքրքրութիւն ստեղծեցին, մեր արդէն

խկ շատ աշխոյժ գաղութէն ներս:

Օսմանեան կայսրութեան մէջ հայերու բռնի մահմետականացման հետեւանքները, Հայ Դատի հետապնդման գործին մէջ, մեծ եւ ազդու փաստ մըն է, Օսմանեան կայսրութեան կողմէ հայ ժողովուրդի դէմ կատարուած անարդարութեանց եւ անմարդկային արարքներուն մասին:

Այս նիւթին շուրջ, յարգելի դասախօսուհին հսկայ աշխատանք տարած էր եւ որուն մէկ պատուիկը շատ հաճելի եւ հետաքրքրական ձեւով ներկայացուց այդ գիշեր:

Խորաթափանց ուսումնասիրութեամբ մը Դոկտ. Սահակեան ուսումնասիրած է Հայաստանի Բաբերդ, Սպեր, Դերջան գաւառներու ժողովրդավարական պատկերը 16-րդէն 20-րդ դարերու: Այդ ուսումնասիրութենէն ի յայտ եկած է, որ 16-րդ դարուն այս շրջանները եւ անոնց յարակից տարածքները հայախիտ բնակչութիւն ունէին եւ հայերը գե-

Շաբ. էջ 16

Եօթերոր



Հինգերոր

Հայ Կատարի եւ ունեցաւ պանութ Փոքր ութերոր ամենայ իրենց ցիչներո տարեցի

ԴՈԿՏ. ԼՈՒՍԻՆԷ ՍԱՐԱԿԵԱՆԻ ՇԱՅԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Շար. էջ 6-ին

րակչիւ մեծամասնութիւն էին հոն:

Յստակ է, որ թուրք պատմաբանները պիտի ժխտէին այս բոլոր իրականութիւնները եւ զանց առնէին հայերու անուները: Բայց փառք ու պատիւ հայրենի եւ սփիւռքի մեր պատմաբաններուն, որոնք այսպիսի հսկայ ուսումնասիրութիւններով կը ջանան դէմ կենալ թրքական ստորին ուրացումներուն եւ զեղծարարութեանց:

Ապա, Դոկտ. Սահակեան մանրամասնօրէն անդրադարձաւ իսլամական իշխանութեանց վարած բռնի մահմետականացման ծրագիրին եւ գործընթացին: Այդ ծրագիրը ունէր քանի մը բաժիններ.

ա. Բռնի մահմետականացում.

բ. Քրիստոնեաներու վրայ դրուած մօտ 80 տեսակ տուրքերու պարտադրում.

գ. Գեղեցկատես քրիստոնեայ մանուկները կը հաւաքէին եւ զանոնք մանկաժողով (տերչիմէ) տանելով, կրօնափոխ կ'ընէին: Անոնցմէ կազմուած են ենիչերիներու զօրամասը, որոնք մեծ դաժանութեամբ կռուած եւ կողոպտած են քրիստոնեայ հայերը:

դ. Յուլթուավաթի քաղաքականութիւնը, ուր յատուկ արհեստակցական միութիւններու մէջ, իսլամներ եւ քրիստոնեաներ կը միաւորուէին որպէսզի ապագային այդ քրիստոնեաները մահմետական ըլլային:

ե. Կամաւոր կրօնափոխութեան, կառավարութիւնը այնպիսի անտանելի պայմաններ կը պարտադրէր, որ մարդիկ կամաւոր կրօնափոխ ըլլային, իրենց Ֆիզիքականը պահելու համար...:

Դոկտ. Սահակեան այս հրէշային ծրագիրը բազմակողմանիօրէն ուսումնասիրելով ներկայացուց Համազնի շրջանի հայութեան վիճակը: Նախ տուաւ այդ տարածաշրջանի պատմականը, եւ բազմաթիւ տուեալներով նկատագրեց այդ շրջանի մար-

դոց բերած նպաստը՝ Բիւզանդական եւ Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ համազնայերը մահմետականացնելու գործընթացը եղած է երեք հանգրուաններով:

ա. 15-17-րդ դարեր

բ. 18-19-րդ դարեր

գ. 19-20-րդ դարեր:

Համազնահայերուն մէկ մասը գաղթած են Ռուսիա, իսկ անոնց մեծամասնութիւնը բռնի կրօնափոխ եղած ըլլալով եւ, հայերէն չխօսելով հանդերձ, տակաւին ունին հայութեան պատկանելու գիտակցութիւնը: Դոկտ. Սահակեան կարդաց անոնց գործածած խօսակցական լեզուէն պատառիկներ:

Յուցադրուեցաւ մօտ քսան վայրկեան տեւող ժապաւէն մը, որ համազնահայութեան կեանքին մէկ պատկերը կը ներկայացնէր եւ որ շատ յուզեց ներկաները, որուն յաջորդեց Դոկտ. Լուսինէ Սահակեանի 2007-ին Երեւան հրատարակուած գիրքին գինեձօնը:

Դասախօսութեան եւ գինեձօնի աւարտին, յարգելի դասախօսուհին պատասխանեց իրեն ուղղուած գրաւոր հարցումներուն:

Ջերմօրէն կը շնորհաւորենք «Արարատ» հիմնադրամը, այսպիսի բարձրորակ եւ խիստ այժմէական դասախօսութիւն մը կազմակերպելուն համար: Այս առթիւ յիշենք նաեւ, որ այս հիմնադրամը, որ հազիւ քանի մը տարուայ կեանք ունի մեր գաղութէն ներս, ցարդ յոյժ գնահատելի աշխատանք տարած է, անվերապահօրէն արժանանալով մեր գաղութի գնահատանքին:

Շնորհակալութեան յատուկ խօսք ունինք Դոկտ. Լուսինէ Սահակեանին եւ իր արժանաւոր ամուսինին Դոկտ. Արմէն Այվազեանին, հայ քաղաքական մտքի զարգացման եւ թրքագիտութեան ճիւղէն ներս տարած շնորհակալ աշխատանքին համար:

Բոլորին վարձքը կատար ըլլայ: